

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՀՀ Արմավիրի մարզի Ամբերդի համայնքապետարանը (այսուհետ համայնքապետարան) հայտարարում է մրցույթ համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետի (ծածկագիր 3.1-2) համայնքային ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար
05.08.2021

Տիպ` [Համայնքային ծառայության թափուր պաշտոններ](#)
Հայտատու` Ամբերդի համայնքապետարան, համայնքի
ղեկավար` Գևորգ Ղամբարյան
Համայնքային ծառայության մասին օրենքի 14–րդ հոդված
ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Արմավիրի մարզի Ամբերդի համայնքապետարանը (այսուհետ համայնքապետարան) հայտարարում է մրցույթ համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետի (ծածկագիր 3.1-2) համայնքային ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ամբերդի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ (ծածկագիր 3.1-2)

Առաջատար մասնագետը աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ օրենքով սահմանված կարգով իրականացնում է անշարժ գույքի հարկի և փոխադրամիջոցների գույքահարկի հավաքագրումը /գանձումը/, ինչպես նաև տեղական տուրքերի և վճարների, համայնքային սեփականություն հանդիսացող գույքի վարձավճարների գանձումը:

Թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է`

- Միջնակարգ կրթություն,
- Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, <<Տեղական ինքնակառավարման մասին>>, <<Համայնքային ծառայության մասին>>, <<Գանձապետական համակարգի մասին>>, <<Գույքահարկի մասին>>, <<Դրամարկղային գործառնությունների մասին>>, Հայաստանի Հանրապետության օրենքների, աշխատակազմի կանոնադրության և իր լիազորությունների հետ կապված այլ իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն
- Համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն

Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար հայտարարված մրցույթը կկայանա 2021 թվականի սեպտեմբերի 8-ին ժամը 12.00-ին Արմավիրի մարզի Ամբերդի համայնքապետարանի շենքում:

Մրցույթին մասնակցել ցանկացող ՀՀ քաղաքացիները համայնքապետարանի աշխատակազմ կամ ՀՀ Արմավիրի մարզպետարան պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

- Դիմում մրցութային հանձնաժողովի անունով (ձևը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս) դիպլոմի, աշխատանքային գրքույկի պատճենները բնօրինակի հետ միասին.
- Արական սեռի անձինք զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող վկայականի պատճեն բնօրինակի հետ մյասին.
- Մեկ լուսանկար 3*4 չափի.
- Անձնագրի պատճեն.
- Հայտարարություն այն մասին, որ ինքը չի տառապում Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 15-ի թիվ 98-Ն որոշմամբ հաստատված ցանկում ընդգրկված հիվանդություններից որևէ մեկով,
- Հայտարարություն այն մասին, որը ինքը դատական կարգով չի ձանաչվել անգործունակ կամ սահմանափակ գործունակ, ՀՀ քաղաքացիները մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը հանձնում են անձամբ՝ ներկայացնելով անձնագիր:

Ներկայացվող փաստաթղթերի պատճենների հետ միասին անհրաժեշտ է ներկայացնել նաև դրանց բնօրինակները:

Ներկայացրած փաստաթղթերի պատճենները ետ չեն վերադարձվում:

Փաստաթղթերը ընդունվում են ամեն օր ժամը 9.00-18.00, բացի շաբաթ և կիրակի օրերից Ամբերդի համայնքապետարանում հեռ. 094-36-77-37, 093-31-84-61 կամ ՀՀ Արմավիրի մարզպետարանում Աբովյան փողով 71, հեռ. 2-76-49 կամ 2-07-70:

Մրցույթին մասնակցել ցանկացող քաղաքացիները լրացուցիչ տեղեկություններ ստանալու, ինչպես նաև պաշտոնի անձնագիր և հարցաշարերին ծանոթանալու համար կարող են դիմել Ամբերդի համայնքապետարանի աշխատակազմ:

Դիմումների ընդունման վերջին ժամկետը 2021 թվականի օգոստոսի 25-ը ժամը 18:00–ն: